

Հաստատված է
«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ կողմից՝
26.07.2023թ. N 07-23-3 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան



26 հուլիսի 2023թ.

«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ա.



1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿ

- 1.1. Սույն Կանոնակարգով սահմանվում են «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում հաճախորդներին պատկանող արժեթղթերի և/կամ արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների կառավարման կարգն ու պայմանները:
- 1.2. Սույն Կանոնակարգը մշակված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետև՝ Օրենք), ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը:

Արժեթղթերի փաթեթի կառավարում կամ Հավատարմագրային կառավարում. Ընկերության կողմից պարզևավճարի դիմաց իր տիրապետմանը հանձնված Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (Ճահառու) արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների (այսուհետև՝ Դրամական միջոցներ), Հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարում՝ Հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն,

Կառավարման հիմնադիր. անձ, որն իրեն սեփականության իրավունքով պատկանող, բացառությամբ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով նախատեսված դեպքերի, արժեթղթերը և/կամ արժեթղթերի ներդրման համար անհրաժեշտ դրամական միջոցները՝ ակտիվները, հանձնում է Ընկերությանը,

Հաճախորդ. անձ, որի հետ Ընկերությունը նախատեսում է կնքել Հավատարմագրային կառավարման պայմանագիր կամ, որը հանդիսանում է Կառավարման հիմնադիր,

Ճահառու. Անձ, ի շահ որի իրականացվում է փաթեթի կառավարումը: Ճահառու կարող է լինել նաև Կառավարման հիմնադիրը: Փաթեթի կառավարիչը չի կարող լինել շահառու:

Փաթեթի կառավարիչ. Անձ, որն Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն իրականացնում է արժեթղթերի փաթեթի կառավարում՝ ի շահ Կառավարման

հիմնադրի կամ նրա նշած անձի (Շահառուի): Սույն կանոնակարգի իմաստով փաթեթի կառավարիչ է հանդիսանում Ընկերությունը,

Գործընկեր կազմակերպություն. անձ, որի ներգրավմամբ և/կամ միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը ծառայություններ է մատուցում Հանախորդին,

Պայմանագիր. հավատարմագրային ծառայություններից օգտվելու համար Հանախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է Հանախորդի արժեթղթերի և դրամական միջոցների Հավատարմագրային կառավարման կապակցությամբ կողմերի իրավահարաբերությունները, սահմանում նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմանները,

Ներդրումային հայտարարագիր. Պայմանագրի շրջանակներում Հավատարմագրային կառավարման օբյեկտ հանդիսացող դրամական միջոցների ներդրման ուղղությունները, պայմաններն ու կարգը, այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները սահմանող փաստաթուղթ,

Հավատարմագրային կառավարման օբյեկտ. արժեթղթեր, ածանցյալ ֆինանսական գործիքներ և Դրամական միջոցներ, որոնք տրվել են Հավատարմագրային կառավարմանը, ինչպես նաև բոլոր այն արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները և դրամական միջոցները, որոնք Ընկերության կողմից ձեռք են բերվել Հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության արդյունքում,

Ներդրումային որոշում. Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում Ընկերության կողմից արժեթղթերով գործարք կատարելու վերաբերյալ որոշում,

Աշխատակից. Ընկերության աշխատակից, որն ունի արժեթղթերի փաթեթի կառավարման որակավորում,

Հաշվետու ժամանակաշրջան. եռամսյակ, այսինքն՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կողմերի համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում Պայմանագիրը կնքելու օրից մինչև տվյալ եռամսյակի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

2.2. Սույն կանոնակարգում և դրա հավելվածներում օգտագործված այլ հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նշանակությունը:

a.

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 3.1. Կառավարման հիմնադրի միջոցները Հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում Ընկերությանը դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը:
- 3.2. Հավատարմագրային կառավարման հանձնված միջոցները առանձնացվում են Ընկերության արժեթղթերից և դրամական միջոցներից և պահվում են Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվներում՝ սույն Կանոնակարգով սահմանված կարգով:
- 3.3. Հանախորդի միջոցները Հավատարմագրային կառավարման հանձնելը հանգեցնում է Պայմանագրով սահմանված ժամկետով Ընկերությանը դրանց նկատմամբ օգտագործման և տիրապետման իրավունքի տրամադրմանը, եթե սույն Կանոնակարգով կամ Պայմանագրով մասնակի կամ ամբողջությամբ չի սահմանափակվում այդ իրավունքներից որևէ մեկը:
- 3.4. Ընկերությունը կառավարման հանձնված Հանախորդի միջոցների հետ կապված գործարքները կնքում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես սվյալ Փաթեթի կառավարիչ: Այդ պայմանը համարվում է պահպանված, եթե գրավոր ձևակերպում չպահանջող գործողությունները կատարելիս Ընկերությունը մյուս կողմին տեղեկացրել է որպես Փաթեթի կառավարիչ՝ դրանք կատարելու մասին, իսկ գրավոր փաստաթղթերում Ընկերության անվանումից հետո արվել է «Փ. Կ.» նշումը:
- 3.5. Արժեթղթերի փաթեթի կառավարումն իրականացվում է Ներդրումային հայտարարագրում սահմանված ներդրումային սահմանափակումների հիման վրա:
- 3.6. Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակում Ընկերությունը չի խոստանում եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակ:

4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՅՈՒՄ

- 4.1. (4.1. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.2. (4.2. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.3. (4.3. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.4. (4.4. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.5. (4.5. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)

a.

ԿԱՆՈՆԱՎԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

- 4.6. (4.6. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.7. (4.7. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.8. (4.8. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.9. (4.9. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.10. (4.10. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.11. (4.11. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.12. (4.12. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.13. (4.13. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.14. (4.14. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.15. (4.15. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.16. (4.16. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)
- 4.17. Ընկերությունն իր Հաճախորդներին պետք է առաջարկի այնպիսի մեթոդ, որը վերջիններիս հնարավորություն կընձեռի գնահատել և սույն Կանոնակարգով սահմանված որևէ իմաստալից հենանիշի հետ համեմատել Արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունը (արժեթղթերի փաթեթի եկամտաբերությունը):
- 4.18. Արժեթղթերի փաթեթի գնահատման սկզբունքները նկարագրված են սույն Կանոնակարգի Հավելված 3-ի 5.2. կետում: Արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի շուկայական արժեքների գնահատման հիման վրա՝ Ընկերության տնօրենի կողմից սահմանված ձեռնարկում զետեղված հաշվարկման եղանակների, այդ թվում՝ բանաձևերի շրջանակներում Հաճախորդի ընտրված մեթոդաբանությանը համապատասխան հաշվարկվում է փաթեթի եկամտաբերությունը:
- 4.19. Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին միաժամանակ.
 - ա) պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա Հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են Հաճախորդի կողմից նշված սահմանափակումներին,
 - բ) չպետք է հիմնվի Ընկերության՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ վերջինիս ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա:

4.20. Իմաստալից հենանիշը կարող է հիմնվել նաև բորսայական ինդեքսների, բանկային ավանդների, այլ կառավարիչների կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունն արտահայտող ամփոփ ցուցանիշների, համանման գործիքների որոշակի խմբի համար հաշվարկված միջին եկամտաբերության և նմանատիպ այլ ցուցանիշների վրա:

4.21. Իմաստալից հենանիշը համաձայնեցվում է Հանախորդի հետ և սահմանվում ներդրումային հայտարարագրում: Իմաստալից հենանիշ սահմանելիս հաշվի են առնվում Հանախորդի միջոցների կառավարման ու ներդրման ուղղությունները, այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել փաթեթի կառավարման շրջանակներում: Որպես իմաստալից հենանիշ կարող են հանդես գալ՝

- ՀՀ ԿԲ կողմից հայտարարված վերաֆինանսավորման տոկոսադրույքը,
- ՀՀ բանկային համակարգում գործող բանկային ավանդների միջին եկամտաբերության ցուցանիշները՝ ըստ արժույթի և/կամ ժամկետայնության,
- Պետական պարտքի տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշները,
- Երկիրը, տարածաշրջանը կամ ճյուղը բնութագրող բորսայական ինդեքսները,
- Երկիրը, տարածաշրջանը կամ ճյուղը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները,
- Այլ՝ Հանախորդի կողմից առաջարկված ցուցանիշ,
- Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա որոշակի կշիռներով կառուցված համախմբված ցուցանիշ:

4.22. Ի լրումն սույն Կանոնակարգի 4.1. կետով սահմանված տեղեկատվության, Ընկերությունը սույն Կանոնակարգի 4.2. կետով սահմանված կարգով Հանախորդներին պետք է տրամադրի նաև հետևյալ տեղեկատվությունը՝

- տեղեկատվություն Հանախորդի արժեթղթերի փաթեթի արժեքի գնահատման մեթոդի և հանախակնության մասին,
- այն հենանիշի առանձնահատկությունները, որի հետ պետք է համեմատվի կառավարման արդյունավետությունը (Հանախորդի արժեթղթերի փաթեթի եկամտաբերությունը),
- այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել այդ

արժեթղթերով կառավարման շրջանակներում:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

5.1. Ընկերությունը պարտավոր է Հանախորդից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում Հանախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին, որը հնարավորություն կտա Հանախորդին առաջարկել այնպիսի ներդրումային ռազմավարություն և արժեթղթերի պորտֆել, որոնք առավելագույնս համապատասխանում են Հանախորդի ցանկությանը: Նշված տեղեկատվությունը չստանալու դեպքում Ընկերությունն իրավունք չունի Հանախորդին հորդորել որևէ արժեթղթում ներդրում կատարել:

5.2. Ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

- 1) հանախորդի կանոնավոր եկամտի աղբյուրները և մեծությունը,
- 2) ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները,
- 3) ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ,
- 4) կանոնավոր ֆինանսական արտահոսքերը:

5.3. Ներդրումային նպատակների մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

- 1) այն ժամանակահատվածը, որի ողջ ընթացքում Հանախորդը ցանկանում է պահել այդ ներդրումը,
- 2) ռիսկերի նկատմամբ իր նախապատվությունը և դրանց շրջանակը,
- 3) կատարվող ներդրման նպատակը:

5.4. Ներդրումային գործունեության բնագավառում Հանախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

- 1) տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է Հանախորդը,
- 2) Հանախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հանախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները,
- 3) Հանախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

a.

- 5.5. Ընդհանուր առմամբ, Ընկերությունը կարող է հիմնվել Հանախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:
- 5.6. Այն դեպքում, երբ Հանախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 5.2., 5.3. և 5.4. կետերով սահմանված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը բանավոր զգուշացնում է Հանախորդին այն մասին, որ վերջինիս նման վարքագիծը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ռազմավարություն և արժեթղթերի պորտֆել, որոնք առավելագույնս համապատասխանում են Հանախորդի ցանկությանը:
- 5.7. Հանախորդը պարտավոր է իր կողմից նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում տեղեկացնել Ընկերությանը՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- 6.1. Արժեթղթերի փաթեթի կառավարումն իրականացվում է Ընկերության և Հանախորդի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա:
- 6.2. Ընկերությունն իրավունք ունի կնքել Պայմանագիր արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակում հանձնման ենթակա միջոցների սեփականատիրոջ կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի հետ:
- 6.3. Մինչև Պայմանագիր կնքելը Ընկերությունը պարտավոր է.
- 1) Հանախորդին ընձեռել արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, այդ թվում՝ սույն Կանոնակարգին ծանոթանալու հնարավորություն.
 - 2) Հանախորդին տեղեկացնել արժեթղթերի ձեռքբերման, հաշվառման, օտարման և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դրանց հետ կապված ռիսկերի մասին, ներդրողների պաշտպանության կիրառելի մեխանիզմների մասին (առկայության դեպքում), ինչպես նաև Հանախորդին տրամադրել ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ՝ հաշվի առնելով Հանախորդի՝ ներդրումների բնագավառում ունեցած փորձը և գիտելիքները, ինչպես նաև կառավարման առարկա հանդիսացող արժեթղթերի

a.

գինը և ծավալը.

- 3) իրականացնել Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով պահանջվող այլ գործողություններ:
- 6.4. Պայմանագիրը կազմվում է Ընկերության կողմից և, Հանախորդի կողմից վավերացվելուց հետո, ներկայացվում Ընկերության տնօրենի հաստատմանը, իսկ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ընկերության հաշվապահությանը՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ կատարելու նպատակով: Պայմանագրի երկկողմանի հաստատվելու (ուժի մեջ մտնելու և կողմերի համար պարտադիր դառնալու) պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ գործողություններ՝ սույն Կանոնակարգի 9.1. և 9.4. կետերով ստանձնած պարտականությունները կատարելու ուղղությամբ:
- 6.5. Ընկերությունը Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում իրավունք ունի Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակներում Հանախորդից ընդունել միջոցներ:
- 6.6. Եթե Պայմանագրի համաձայն հանախորդի միջոցները նախատեսվում է Ընկերությանը հանձնել տարբեր ժամկետներում, ապա Պայմանագիրը գործում է միայն Ընկերությանը փաստացի փոխանցված միջոցների մասով՝ Ընկերության կողմից դրանք սույն Կանոնակարգի 9.7 կետով սահմանված պահից ստանալուց հետո:
- 6.7. Պայմանագրով Հանախորդի կողմից Ընկերությանը հանձնված միջոցների Հավատարմագրային կառավարման արդյունքում ստացվող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները, առանց Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Ընկերության կողմից ստանալու պահից դառնում են արժեթղթերի փաթեթի կառավարման առարկա, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնակարգով կամ Պայմանագրով:
- 6.8. Եթե Հանախորդի կողմից Հավատարմագրային կառավարման են հանձնվում փոխառությամբ վերցրած միջոցներ, ապա Պայմանագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել այդ միջոցների փոխառության ժամկետը:
- 6.9. Հանախորդն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում իրականացնել իր միջոցների մասնակի դուրսբերում՝ Ընկերությանը ներկայացնելով գրավոր դիմում (Հավելված 2):
- 6.10. Սույն Կանոնակարգի 6.9. կետով սահմանված դիմումի ստացման պահից Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ քայլերը Հանախորդի միջոցները

a.

- վերադարձնելու ուղղությամբ և առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանախորդի միջոցները փոխանցում է վերջինիս կողմից ներկայացված հաշվեհամարին:
- 6.11. Պայմանագիրը կարող է Հանախորդի կողմից միակողմանիորեն լուծվել՝ Ընկերությանն առնվազն տասն օր առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը պարտավոր է Հանախորդին կամ նրա ներկայացուցչին փոխանցել Հանախորդին պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները, բացառությամբ այն միջոցների, որոնք Ընկերության՝ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի ուժով ենթակա են վերադարձման ավելի ուշ ժամկետի ընթացքում. ընդ որում, նշված միջոցները վերադարձվում են Հանախորդին Ընկերության կողմից դրանք երրորդ անձանցից ստանալուն գույրնթաց, դրանց ստացումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.12. Հանախորդի միջոցների հանձնումը Ընկերությանը, ինչպես նաև սույն Կանոնակարգի 6.9. և 6.11. կետերով սահմանված՝ Հանախորդի միջոցների վերադարձն իրականացվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Ակտիվների հանձնման-ընդունման ակտի» (Հավելված 1):

7. ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

- 7.1. Ներդրումային հայտարարագրի ստորագրմամբ Հանախորդն Ընկերությանը տալիս է փաթեթի կառավարման ցուցումներ և սահմանափակումներ:
- 7.2. Ներդրումային հայտարարագրի դրույթները պարտադիր են Ընկերության կողմից Պայմանագրի մյուս դրույթների հետ հավասար հիմքերով պատշաճ կատարման համար: Ընկերությունը չի կարող ձեռնարկել ներդրումային հայտարարագրին հակասող գործողություններ:
- 7.3. Ներդրումային հայտարարագիրը կազմվում է համաձայն Հավելված 3-ի և պետք է պարունակի՝
- 1) Արժեթղթերի փաթեթի կառավարման ուղղությունները և նպատակը, որոնք բխում են հանախորդի ներդրումային ռիսկեր կրելու ցանկության և կարողության աստիճանից.
 - 2) Ներդրումային փաթեթի կազմի և կառուցվածքի սահմանափակումները (տարբեր տեսակի ակտիվների տեսակարար կշիռների թույլատրելի միջակայքերը)

a.

- 7.4. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի կողմերից որևէ մեկի կողմից հայտարարագրի փոփոխման վերաբերյալ գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում տվյալ ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:
- 7.5. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի սահմանումը չի կարող արգելք հանդիսանալ նշված ժամկետի ընթացքում դրանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, այդ թվում՝ որոշակի ժամկետով այն կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նման գործողությունները բխում են Հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև Շահառուի) շահերից:
- 7.6. Կառավարման հիմնադիրը ցանկացած պահի Ընկերությունից կարող է պահանջել Ներդրումային հայտարարագրի վերանայում: Նման պահանջ ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը՝ Հաճախորդի հետ համաձայնեցված իրականացնում է փոփոխություններ և/կամ լրացումներ Ներդրումային հայտարարագրում:
- 7.7. Ներդրումային հայտարարագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվում են լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կցվում է Պայմանագրին:

8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄՆԵՐԸ

- 8.1. (8.1. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)**
- 8.2. (8.2. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)**
- 8.3. (8.3. կետը ուժը կորցրած 26.07.2023թ.)**
- 8.4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկը շուկայի օբյեկտիվ իրականությունն է, նրանից չի կարելի խուսափել, ուստի Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու հանգամանքը, որի նպատակն է կանխատեսել և հնարավորինս կանխել և/կամ նվազեցնել Ընկերության և Հաճախորդների ռիսկերը: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղված հետևյալ հիմնական միջոցառումները.
- 8.4.1. Արժեթղթեր թողարկողների մանրամասն վերլուծություն (առաջին հերթին Ընկերությունն ուշադրություն է դարձնում հետևյալ գործոնների առկայությանը՝

հաջողակ և փորձառու կառավարիչների արհեստավարժ թիմ, ռազմավարության հստակ պատկերացում և մանրամասն գործարար ծրագիր (բիզնես-պլան), շուկայում առաջատար դիրքեր գրավելու ներուժ, ֆինանսական բարելավվող ցուցանիշներ, սպառողական պահանջարկի բավարարման լայն հնարավորություններ, թափանցիկություն, կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում, ֆինանսական հաշվետվողականության բարձր մակարդակ և այլն)

8.4.2. Ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա

8.4.3. Արժեթղթերի փաթեթի կառավարման հետ կապված ռիսկերի անընդհատ մոնիտորինգ և Հանախորդին անհապաղ տեղեկացում մոնիտորինգի արդյունքում ռիսկերի վերաբերյալ բացահայտված ցանկացած փոփոխության կամ հնարավոր փոփոխության (այդ թվում՝ ռիսկերի նոր տեսակներ ի հայտ գալու) մասին, որը կարող է գերազանցել հանախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը.

8.4.4. Հանախորդներին շարունակական իրազեկում բարձր հուսալիությամբ և ռիսկ-եկամտաբերություն հարաբերակցության առումով գրավիչ ներդրումային գործիքների վերաբերյալ:

8.4.5. Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ մատուցելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը (բացահայտումը, գնահատումը և վերահսկումը) Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի կատարողականի գնահատման անբաժանելի մասն է:

9. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ

9.1. Ընկերությունը պարտավոր է Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության շրջանակներում ընդունված միջոցները հաշվառել իր սեփական միջոցներից առանձին:

9.2. Հանախորդների միջոցները Պայմանագրի շրջանակում հաշվառվում են Ընկերության կողմից Գործընկեր կազմակերպությունների մոտ Հավատարմագրային կառավարման նպատակով բացված առանձնացված հաշիվներում: Հանախորդի ցանկության դեպքում միջոցները կարող են հաշվառվել նաև Հանախորդի անունով Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվներում, պայմանով, որ Ընկերությունը

a.

Փաթեթի կառավարման իրականացման համար անհրաժեշտ իրավասություններ ստանա այդ հաշիվների նկատմամբ:

- 9.3. Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար բացված բանկային հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային հաշիվը նախատեսված է Ընկերության Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար:
- 9.4. Ընկերությունն իրականացնում է նաև Հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների առանձնացված ներքին հաշվառում:
- 9.5. Եթե Ներդրումային հայտարարագրով սահմանված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում ներդրումների իրականացման հնարավորություն, ապա այդ արժեթղթերի պահառության նպատակով Հաճախորդը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացում է արժեթղթերի սեփական հաշիվ, որի վավերապայմանները Պայմանագրի կնքման պահին տրամադրվում են Ընկերությանը:
- 9.6. Կառավարման հանձնված արժեթղթերը Հաճախորդի արժեթղթերի հաշվում հաշվառելու դեպքում Հաճախորդը լիազորում է Ընկերությանը՝ տիրապետելու հաշվում առկա արժեթղթերը, ուստի վերջինս հանդես է գալիս որպես լիազոր ներկայացուցիչ:
- 9.7. Ընկերության կողմից հավատարմագրային կառավարման ենթակա դրամական միջոցները և/կամ արժեթղթերը ստացված են համարվում սույն Կանոնակարգի 9.2. կետով սահմանված հաշիվներին մուտքագրման պահից:
- 9.8. Ընկերությանը Պայմանագրի շրջանակներում հանձնման ենթակա միջոցների առաջնային մուտքի նվազագույն չափ է սահմանվում 200 մլն ՀՀ դրամը:
(9.8 կետը խմբ. 20.09.2022թ.)
- 9.9. Առանձին դեպքերում սույն Կանոնակարգի 9.8 կետով սահմանված նվազագույն չափը կարող է վերանայվել Ընկերության տնօրենի որոշմամբ:
- 9.10. Կառավարման հիմնադիրը կարող է կառավարման համար տրամադրել լրացուցիչ միջոցներ Պայմանագրի գործողության ողջ ժամկետում՝ «Ակտիվների հանձնման-ընդունման ակտի» համաձայն:

10. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՐ

- 10.1. Արժեթղթերի փաթեթի կառավարումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

a.

10.1.1. Աշխատակիցներն իրականացնում են ֆինանսական շուկաների և առանձին ֆինանսական գործիքների վերլուծություն տարբեր աղբյուրներից ստացված հասանելի հրապարակային տեղեկությունների հիման վրա:

(10.1.1 կետը խմբ. 14.10.2022թ.)

10.1.2. Հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա՝ Աշխատակիցը կայացնում է Ներդրումային որոշումներ, որոնք սույն Կանոնակարգի պահանջների համաձայն ենթակա են գրանցման Ընկերությունում վարվող էլեկտրոնային գրանցամատյանում: Աշխատակիցն ընդունված Ներդրումային որոշումների հիման վրա կազմում և հաղորդում է ֆինանսական գործիքների գնման/վաճառքի հանձնարարականները և ի կատարումն ներկայացնում Գործընկեր կազմակերպություններին:

(10.1.2 կետը խմբ. 14.10.2022թ.)

10.1.3. (10.1.3 կետը ուժը կորցրած 14.10.2022թ.)

10.1.4. (10.1.4 կետը ուժը կորցրած 14.10.2022թ.)

10.1.5. (10.1.5 կետը ուժը կորցրած 14.10.2022թ.)

10.1.6. Ընկերության աշխատակիցները իրականացնում են Հանախորդների արժեթղթերի փաթեթի ընթացիկ ռիսկերի ամենօրյա մոնիտորինգ, Ներդրումային հայտարարագրից արժեթղթերի փաթեթի կառուցվածքի շեղման կամ փաթեթի առանձին արժեթղթերի վերաբերյալ կարևոր տեղեկությունների ի հայտ գալու պարագայում Աշխատակիցը իրականացնում է լրացուցիչ վերլուծություն, որի հիման ընդունվում են Ներդրումային որոշումներ: **(10.1.6 կետը խմբ. 14.10.2022թ.)**

10.1.7. Ներքին վերահսկողության նպատակներից ելնելով, Ընկերության տնօրենի կողմից կատարվում է Հանախորդների միջոցների առանձնացված հաշվառման նպատակով Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվների նկատմամբ ընթացիկ վերահսկողություն:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

11.1. Ընկերությանն արգելվում է.

1) Արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող կանոնների

a.

պահանջների, ինչպես նաև Պայմանագրի դրույթների խախտմամբ գործունեություն իրականացնել, այդ թվում՝ կնքել և կատարել գործարքներ.

- 2) Արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունել արժեթղթեր, որոնք ՀՀ գործող օրենսդրության համաձայն չեն կարող լինել արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ.
- 3) Արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված արժեթղթերը գրավ դնել կամ դրանցով ապահովված երաշխիքներ տալ՝ առանց հաճախորդի հետ կնքված գրավոր համաձայնության.
- 4) Արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված միջոցները ցանկացած կերպ օգտագործել ի շահ իրեն և/կամ երրորդ անձի օգտին կամ դրանց տիրապետման իրավունքը պատվիրակել երրորդ անձի, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրով:
- 11.2. Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցում է նաև երրորդ անձանց, որի արդյունքում Ընկերության և Հաճախորդի, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների միջև կարող է առաջանալ շահերի բախում:
- 11.3. Պայմանագրի շրջանակներում Ընկերության և Հաճախորդի շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Ընկերությունն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել իր շահերի նկատմամբ Հաճախորդի շահերի գերակայության սկզբունքը:
- 11.4. Ընկերության տարբեր հաճախորդների միջև շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Ընկերությունն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել հաճախորդների նկատմամբ հավասարության և արդարության սկզբունքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաճախորդի հետ կնքված Պայմանագրով և Ներդրումային հայտարարագրով սահմանված պայմանները:
- 11.5. Ընկերության կողմից իր հաշվին գործարքներ կատարելիս Հաճախորդի շահերից և ներդրումային հայտարարագրի պահանջներից բխող Արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված միջոցներով կատարվող գործարքները ենթակա են առաջնահերթ կատարման:
- 11.6. Հաճախորդների հաշիվներով գործարքներ իրականացնելիս Ընկերությունը պետք է հիմնվի գործարքների արդար բաշխման սկզբունքի վրա՝ առանց որևէ հաճախորդի առաջնահերթության իրավունքի տրամադրման: Արժեթղթերում

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

ներդրումներ իրականացնելիս Ընկերությունը պետք է ապահովի, որ մասնակցության հնարավորություն ընձեռվի այն բոլոր Հանախորդներին, որոնց համար տվյալ արժեթուղթը նպատակահարմար է և/կամ նախատեսված է Ներդրումային հայտարարագրով: Եթե Ընկերության ձեռք բերած արժեթղթերի ծավալն այնքան մեծ չէ, որ ապահովվի բոլոր հանախորդների լիարժեք մասնակցությունը տվյալ առաջարկում, ապա վերջինս պետք է արժեթղթերում ներդրումներ կատարի համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր Հանախորդի համար կազմված ներդրումային որոշման մեջ պարունակվող համապատասխան արժեթղթի ծավալի (քանակի):

12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐԸ ԵՎ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԸ

- 12.1. Պայմանագրով նախատեսված՝ Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Կառավարման հիմնադիրը վճարում է Ընկերությանը՝ համաձայն վերջինիս կողմից հաստատված սակագների:
- 12.2. Արժեթղթերի փաթեթի կառավարման սակագները սահմանվում են Ընկերության Հանախորդի միջև կնքվող Պայմանագրով:
(12.2 կետը խմբ. 20.09.2022թ.)
- 12.3. Արժեթղթերի փաթեթի կառավարման վճարը (Կառավարման վճար) հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օրվա և/կամ Պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, հետևյալ բանաձևով.

$$\text{ՓԿՎ} = \text{ՄԱ} * \text{ՏՏ},$$

որտեղ ՓԿՎ-ն Փաթեթի կառավարման վճարն է,

ՄԱ-ն՝ Հանախորդի՝ Ընկերությանը Հավատարմագրային կառավարման հանձնված ներդրումային փաթեթի միջին օրական արժեքն է ամսվա կտրվածքով¹, ՏՏ-ն Ընկերության կողմից սահմանված Արժեթղթերի փաթեթի կառավարման

¹ Պայմանագրի դադարեցման դեպքում պայմանագրի դադարեցման օրվան հաջորդող օրվանից մինչև հաշվետու ամսվա վերջին օրացուցային օրը, ինչպես նաև պայմանագրի կնքման դեպքում օրացուցային ամսվա առաջին օրվանից մինչև պայմանագրի կնքման օրը ընկած օրացուցային օրերի համար ՄԱ-ն հաշվարկելի իս ներդրումային փաթեթի արժեքը ընդունում է 0 արժեքը:

a.

**տարեկան վճարի (արտահայտված տոկոսներով) 1/12-րդ մասն է:
(12.3 կետը խմբ. 20.09.2022թ.)**

12.4. Ընկերության և Կառավարման հիմնադրի միջև կնքված Պայմանագրով սահմանվում է նաև հաջողության պարզևավճարի վճարում՝ եռամսյակի ընթացքում Հավատարմագրային կառավարման արդյունքում գրանցված՝ Հանախորդի ներդրումային փաթեթի արժեքի հավելանքի նկատմամբ՝ արտահայտված տոկոսներով: Ընդ որում՝ ներդրումային փաթեթի արժեքի հավելանքի նկատմամբ կիրառվում է «բարձր ջրագիծ» (High Water-mark) սկզբունքը, որը բացառում է նախկին ժամանակահատվածներում Հանախորդի փաթեթի կառավարման արդյունքում գրանցված վնասների ծածկման համար հաջողության վճարի հաշվարկման հնարավորությունը:

12.5. Կառավարման վճարը և հաջողության պարզևավճարը վճարվում են Պայմանագրով սահմանված ժամկետում:

12.6. Կառավարման վճարը և հաջողության պարզևավճարը, ինչպես նաև Ընկերության կողմից կատարված՝ փաթեթի կառավարման ծառայություններին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը, Կառավարման հիմնադրի կողմից փոխանցվում են Ընկերության կողմից նշված դրամական հաշվին կամ Ընկերության կողմից անակցեպտ հիմունքներով գանձվում են Կառավարման հիմնադրի ներդրումային փաթեթում առկա ակտիվներից:

**13. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ**

13.1. Ընկերությունը պարտավոր է ցանկացած պահի Հանախորդի պահանջով, ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակի համար իր հանախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել Արժեթղթերի փաթեթի կառավարման մասին հաշվետվություն, որն առնվազն պետք է ներառի.

- 1) Ընկերության անվանումը,
- 2) Հանախորդի Արժեթղթերի փաթեթի կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը,
- 3) Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում՝

a.

ա. Արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի ցանկը և փաթեթի արժեքը, ներառյալ փաթեթում ընդգրկված յուրաքանչյուր արժեթղթի իրական արժեքը,
բ. Հանախորդի դրամական միջոցների հաշվեկշիռը,

- 4) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արժեթղթերի փաթեթի տարեկան եկամտաբերությունը,
- 5) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարները՝ տալով դրանց բացվածքն առնվազն ըստ կառավարման դիմաց գանձվող վճարի և գործարքների կնքման համար կատարված ծախսերի,
- 6) կառավարման եկամտաբերության համեմատումը Հանախորդի հետ նախապես համաձայնեցված հենանիշի հետ (նման հենանիշի առկայության դեպքում),
- 7) Հաշվետու ժամանակաշրջանում արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով ստացված շահութաբաժինները, տոկոսները և այլ վճարները,
- 8) Արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով կորպորատիվ գործողությունները (արժեթղթերի փոխարկումը՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բաժանման, կոնսոլիդացիայի կամ թողարկողի վերակազմակերպման արդյունքում):

13.2. Սույն Կանոնակարգի 13.1. կետով սահմանված հաշվետվությունը տրամադրվում է Հանախորդի պահանջը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (պահանջի առկայության դեպքում), ինչպես նաև մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

13.3. Եթե Հանախորդը նախընտրել է ստանալ փաթեթի կառավարման մասին հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր գործարքի, ապա, ի լրումն սույն Կանոնակարգի 13.1. կետով սահմանված հաշվետվության, Ընկերությունը պարտավոր է իր հանախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել նաև հաշվետվություն արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում կնքված յուրաքանչյուր գործարքի (պատվերի) մասին՝ մինչև գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

13.4. Սույն Կանոնակարգի 13.3 կետերով սահմանված՝ Հանախորդներին ներկայացվող հաշվետվությունը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝

- 1) Ընկերության անվանումը,
- 2) Հանախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հանախորդին նույնականացնող համարը,

a.

- 3) գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- 4) գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,
- 5) հանախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- 6) գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
- 7) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- 8) պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- 9) պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- 10) արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
- 11) միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
- 12) ընդհանուր ծավալը,
- 13) գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հանախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),
- 14) Հանախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին Հանախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
- 15) տեղեկատվություն այն փաստի մասին, որ Հանախորդի անունից գործարքի մյուս կողմ որպես հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ Հանախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:

13.5. Այն դեպքում, երբ Հանախորդին հաշվետվություններն ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով, ապա դրանց ներկայացման պահ է համարվում Ընկերության էլեկտրոնային փոստի ելքային նամակագրության բաժնում տվյալ հաշվետվության՝ որպես ուղարկված նամակ գրանցման պահը:

- 13.6. Այն դեպքում, երբ Հանախորդին հաշվետվություններն ուղարկվում են փոստով, դրանց ներկայացման պահ է համարվում փոստային ծառայության կողմից տրված անդորրագրի վրա նշված ամսաթիվը: Անդորրագիրը կցվում է հաշվետվության՝ Ընկերությունում պահվող օրինակին և կարվում «Հանախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում:
- 13.7. Առձեռն եղանակով տրամադրվող հաշվետվությունները Հանախորդին են տրվում երկու օրինակից: Հանախորդը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Ընկերությանը և կարվում «Հանախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում: Հանախորդի կողմից հաշվետվության՝ Ընկերությունում պահպանվող օրինակի վրա ստորագրելու պահը հանդիսանում է հաշվետվության ներկայացման պահ:
- 13.8. Ընկերության՝ Արժեթղթերի փաթեթի կառավարման լիցենզիայի դադարեցումը հիմք չէ հաշվետվությունը Հանախորդին չտրամադրելու համար: Փաթեթի կառավարման լիցենզիան ուժը կորցրած կարող է է ճանաչվել բացառապես Օրենքով սահմանված կարգով:

14. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 14.1. Ընկերությունը պարտավոր է վարել փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակներում կազմված ներդրումային որոշումների գրանցամատյան, որում գրանցումները պետք է կատարվեն ներդրումային որոշման ընդունման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
- 14.2. Ներդրումային որոշումների գրանցումներն առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները՝
 - 1) Հանախորդի անունը, ազգանունը (անվանումը),
 - 2) որոշման մեջ նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
 - 3) որոշման բնույթը, եթե որոշման մեջ նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
 - 4) որոշման համաձայն տրվող պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
 - 5) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

- անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- 6) արժեթղթերի քանակը,
 - 7) միավորի գինը,
 - 8) ընդհանուր ծավալը,
 - 9) Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
 - 10) ներդրումային որոշման կայացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
 - 11) ներդրումային որոշումը կայացնող Աշխատակցի անունը, ազգանունը:
- 14.3. Ներդրումային որոշումների գրանցամատյանը Ընկերության կողմից վարվում է էլեկտրոնային ձևով:

15. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 15.1. Սույն Կանոնակարգ փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերությունում խորհուրդ չի ձևավորվել) և ուժի մեջ են մտնում ժողովի կողմից հաստատման պահից:
(15.1 կետը խմբ. 20.09.2022թ.)

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

Հավելված 1

Ակտիվների հանձնման-ընդունման ակտ

ք. Երևան

«___» «_____» ____թ.

Համաձայն արժեթղթերի փաթեթի կառավարման «___» պայմանագրի, Կառավարման հիմնադիրը՝ _____

_____ (Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

ի դեմս _____, հանձնում/ընդունում է, իսկ _____ լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները

Փաթեթի կառավարիչ հանդիսացող «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն՝ ի դեմստնօրեն _____, որն առաջնորդվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Փաթեթի կառավարիչ կանոնադրությամբ, ընդունում/հանձնում է հետևյալ ակտիվները՝

1. արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցներ՝ _____ ՀՀ դրամի չափով

2. արժեթղթեր՝

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը)	Քանակը (ծավալային Արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը)	Շուկայական արժեքը (ՀՀ դրամ)

Ընդամենը շուկայական արժեքը ՀՀ դրամով՝ _____

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

Փաթեթի կառավարիչ

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Հասցե
ՀՎՀՀ
h/h
Տնօրեն

կ.տ.

Կառավարման Հիմնադիր

Անուն/Ազգանուն
Անձնագրային տվյալներ
h/h
կապի միջոցներ

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

Հավելված 2

Միջոց մասնակի դուրսերման դիմում

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Տնօրեն պրն.

Դիմում

Հայտնում եմ Ձեզ, որ անձնական պատճառներից ելնելով ցանկանում եմ արժեթղթերի փաթեթի կառավարման N Պայմանագրով կառավարմանը հանձնված միջոցների² որոշ մասը՝ _____ (գումարը նշել թվով և բառերով) ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարի և/կամ այլ արժույթի) չափով դուրս բերել կառավարումից: Խնդրում եմ տեղեկացնել ինձ վերոնշյալ գործառնության իրականացման հնարավորության և ժամկետների մասին:

Իմ բանկային վավերապայմաններն են.

*Բանկի անվանումը՝
h/h՝
արժեթղթերի h/h՝*

Հանախորդ _____/անուն, ազգանուն/ ստորագրություն

« _____ » « _____ » _____ թ.

ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆՇՈՒՄՆԵՐ

Դիմումն ընդունված է՝ « _____ » « _____ » _____ թ.

Դիմումն ընդունողի _____/անուն, ազգանուն և ստորագրություն/

² Եթե Հանախորդը ցանկանում է կառավարումից դուրս բերել արժեթղթերի որոշ մասը, ապա սույն դիմումում պետք է նշվի դուրսերման ենթակա արժեթղթերի թողարկողի անվանումը, արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը) և արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը):

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

Հավելված 3

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ N

ք. Երևան

« ____ » « _____ » _____ թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ներդրումային Հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) սահմանում է Ընկերությանը հանձնված Կառավարման հիմնադրի (այսուհետ՝ Հիմնադիր) միջոցների ներդրման նպատակը, ուղղությունները և ներդրումային փաթեթի կառուցվածքը:

2. ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հիմնադրի միջոցների ներդրման նպատակն է արժեթղթերի փաթեթի ձևավորումը և/կամ կառավարումը որն ուղղված է փաթեթի արժեքի բարձրացմանը:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև « _____ » « _____ » _____ թ.

4. ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԱԹԵԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Ընկերությունն իրեն հանձնված միջոցները կարող է ներդնել հետևյալ ֆինանսական գործիքներում՝

- Բաժնետոմսեր, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթեր
- Ներդրումային ֆոնդերի փայեր
- Պետական և կորպորատիվ եվրոպարտատոմսեր
- Դեպոզիտար ստացականներ
- Պարտքային այլ արժեթղթեր
- Ածանցյալ գործիքներ
- Այլ գործիքներ

4.2 Փաթեթի կառուցվածքը, որը Ընկերությունը պետք է պահպանի արժեթղթերի փաթեթի կառավարման Պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում՝

Փաթեթի կառուցվածքն ըստ սկստիվների

դրամական միջոցներ _____ %

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

արժեթղթեր _____ %

Փայթեթի կառուցվածքն ըստ արժույթի

- ՀՀ դրամ %
- ԱՄՆ դոլար %
- Եվրո %
- Այլ արժույթ %

Փայթեթի կառուցվածքն ըստ արժեթղթերի տիպի

- բաժնետոմսերի %
- կորպորատիվ պարտատոմսեր %
- պետական պարտատոմսեր %
- Այլ արժեթղթեր %

4.3 Հայտարարագրի 4.1 կետով սահմանված ֆինանսական գործիքների ժամկետայնության որևէ սահմանափակում չի սահմանվում:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Այն դեպքում, երբ Ակտիվների շուկայական գնի փոփոխությունը հանգեցնում է Հայտարարագրով սահմանված պայմանների անհամապատասխանության, Ընկերությունը պարտավոր է Ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել Հայտարարագրով սահմանվածին առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

5.2. Արժեթղթերի շուկայական արժեքի գնահատումը կատարվում է ՀՀ դրամով: Արտարժույթով գնանշվող արժեթղթերի շուկայական արժեքը որոշվում է գնահատման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Արժեթղթերի իրական (շուկայական) արժեքի որոշման մեթոդներն են՝

ա. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի համար արժեթղթի շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով եկամտաբերության կորը,

բ. Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ այդ արժեթղթերով բորսայում հաստատված վերջին գործարքի գին (փակման գին) կամ եկամտաբերություն (փակման գին կամ եկամտաբերություն), եթե գործարքի ամսաթվի և հաշվետու ամսաթվի միջև ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը:

գ. Այն արժեթղթերի համար, որոնցով կարգավորվող շուկայում գործարքներ չեն իրականացվել

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

կամ վերջին գործարքն իրականացվել է ավելի քան մեկ ամիս առաջ, սակայն որոնց համար
ամկա է շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր), շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք
ընդունելով շուկա ստեղծողի կողմից առաջարկվող տվյալ արժեթղթի գնանշումները: Ընդ
որում, երկար դիրքի հաշվարկի ժամանակ հիմք է ընդունվում այն գինը կամ
եկամտաբերությունը, որով արժեթուղթը կարող է վաճառվել, իսկ կարճ դիրքի հաշվարկի
ժամանակ՝ այն գինը կամ եկամտաբերությունը, որով տվյալ արժեթուղթը կարող է գնվել:
դ. Այն պարագայում, երբ արժեթղթերի համար կիրառելի չեն շուկայական արժեքի
հաշվարկման՝ սույն կետի «ա» - «գ» պարբերություններով սահմանված եղանակները,
այսինքն՝ եթե գնանշված շուկայական գինն ամկա չէ, այդ դեպքերում արժեթղթերը
գնահատվում են հաճախորդի հետ համաձայնեցված մեթոդով՝ գնային մոդելների, դրամական
հոսքերի բերված արժեքի տեխնիկայի, ինչպես նաև շուկայական գնի հաշվարկման համար
նպատակահարմար համարվող այլ մեթոդների միջոցով:

5.3. Իմաստայից հենանիշ է սահմանվում _____:

6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերություն

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Հասցե
ՀՎՀՀ
h/h
Գործադիր
Տնօրեն

_____ կ.տ.

Կառավարման Հիմնադիր

Անուն/Ազգանուն
Անձնագրային տվյալների/h
կապի միջոցներ

a.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Խմբագրություն՝ 1
Դաս՝ ՀՊ
Ամսաթիվ՝ 26 հուլիսի 2023

Հավելված 4

(Հավելված 4-ը ուժը կորցրած 26.07.2023թ.)

